ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 08.02.2019թ.
Ժամը 11 [00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ՋԲՖԿԾ պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Ա. Սահակյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
2	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
3	«Սինխրոն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Սահակյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ-ի, որի կողմից ներկայացված լիազորագրում սխալ էր նշված գնման ընթացակարգի անվանումը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 14.02.2019թ. մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացրեց վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ-ն շտկեց վերոնշյալ անհամապատասխանությունները և նիստը շարունակվեց:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Սահակյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանում	Չ/Մ	Քանակ	Նախահաշվային առավելագույն գինը՝ ՀՀ դրամ	Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը	Մասնակիցների ընդհանուր գնային առաջարկ՝ ՀՀ դրամ		1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ
						Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	
1	Էլեկտրական շարժիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	դրամ	1	10.000.000	«Սինխրոն» ՍՊԸ	2.390.650	2.868.780	«Սինխրոն» ՍՊԸ
2	Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	դրամ	1	10.000.000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	1.905.000	2.286.000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
					«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	3.731.700	3.731.700	

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 18.02.2019թ. հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, սույն ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերը և քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Սինխրոն» ՍՊԸ-ն, գնահատող հանձնաժողովը որոշեց, գների նվազեցման նպատակով 22.02.2019թ. ժամը 12:15-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Նշված օրը և ժամին «Սինխրոն» ՍՊԸ-ն ներկայացավ բանակցություններին: Բանակցությունների արդյունքում վերոնշյալ մասնակցի նոր նվազեցված ընդհանուր գնային առաջարկը ներկայացված է ստորև՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանում	Հ/Մ	Քանակ	Նախահաշվային առավելագույն գինը՝ ՀՀ դրամ	Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը	Մասնակիցների նախնական ընդհանուր գնային առաջարկ՝ ՀՀ դրամ		Մասնակիցների՝ բանակցությունների արդյունքում նոր նվազեցված ընդհանուր գնային առաջարկ՝ ՀՀ դրամ	
						Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով
1	Էլեկտրական շարժիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	դրամ	1	10.000.000	«Սինխրոն» ՍՊԸ	2.390.650	2.868.780	2.313.200	2.775.840

3.4 Մասնակիցների ներկայացրած (բանակցությունների արդյունքում նվազեցրած) միավորի գները ներառված են սույն արձանագրությանը կցված Հավելված 1-ում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Սահակյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 22.02.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային (ընդհանուր) առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Սինխրոն» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ չափաբաժնում՝ «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ն, սակայն սույն մասնակցի կողմից ներկայացրած միավոր գները որոշ ծառայությունների (տողերի) մասով (տես՝ Հավելված 1) գերազանցում են պատվիրատուի կողմից նախատեսված համապատասխան նախահաշվային միավորի գները:

4.2 Գնումները համակարգողը, արձանագրելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների և գնահատող հանձնաժողովի 2-րդ չափաբաժնի մասով որոշման միջև վերոնշյալ անհամապատասխանությունը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 27-րդ կետը, գրավոր զեկուցեց (զեկուցագիրը կցվում է) պատվիրատուի ղեկավարին, և նույն օրը նիստը կասեցվեց՝ մինչև իրավական եզրակացություն ստանալը:

4.3 28.02.2019թ. ստանալով իրավական եզրակությունը (կցվում է)՝ նիստը շարունակվեց և համաձայն դրա՝ հանձնաժողովի որոշումը 2-րդ չափաբաժնի մասով մնաց անփոփոխ:

4.4 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.5 Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի *«Ֆինանսական միջոցներ»* որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Սահակյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Սահակյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան, 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ս.Սարգսյան
Գնումները համակարգող՝	Ա. Սահակյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Էլեկտրական շարժիչների վերանորոգման և պահպանման ծառայությունների մասով առաջարկված միավորի գներ

Վերանորոգվող էլեկտրական շարժիչների հզորությունները	Ծառայությունների առանձին տեսակների միավորի նախահաշվային գներ՝ ՀՀ դրամ	Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը	Ծառայությունների առանձին տեսակների համար մասնակցի առաջարկած միավորի գներ՝ ՀՀ դրամ			Բանակցությունների արդյունքում ծառայությունների առանձին տեսակների համար մասնակցի առաջարկած (նվազեցված) միավորի գներ՝ ՀՀ դրամ			Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը
			Արժեք (առանց ԱԱՀ)	ԱԱՀ	Գին	Արժեք (առանց ԱԱՀ)	ԱԱՀ	Գին	
1.1 կվտժ 1500- 3000 պտ/րոպ	22200	«Սինխրոն» ՍՊԸ	18500	3700	22200	18500	3700	22200	«Սինխրոն» ՍՊԸ
1.5 կվտժ 1500- 3000 պտ/րոպ	33000	«Սինխրոն» ՍՊԸ	27500	5500	33000	27500	5500	33000	«Սինխրոն» ՍՊԸ
2.2 կվտժ 1500-3000 պտ/րոպ	39840	«Սինխրոն» ՍՊԸ	32200	6440	38640	32200	6440	38640	«Սինխրոն» ՍՊԸ
3.0 կվտժ 1500-3000 պտ/րոպ	52560	«Սինխրոն» ՍՊԸ	42500	8500	51000	40700	8140	48840	«Սինխրոն» ՍՊԸ
4.0 կվտժ 1500-3000 պտ/րոպ	75120	«Սինխրոն» ՍՊԸ	60750	12150	72900	57500	11500	69000	«Սինխրոն» ՍՊԸ
5.5 կվտժ 1500-3000 պտ/րոպ	82620	«Սինխրոն» ՍՊԸ	66800	13360	80160	65000	13000	78000	«Սինխրոն» ՍՊԸ
7.5 կվտժ1500-3000 պտ/րոպ	103200	«Սինխրոն» ՍՊԸ	83500	16700	100200	80000	16000	96000	«Սինխրոն» ՍՊԸ
11.0 կվտժ1500-3000 պտ/րոպ	144600	«Սինխրոն» ՍՊԸ	117000	23400	140400	112800	22560	135360	«Սինխրոն» ՍՊԸ
15.0 կվտժ1500-3000 պտ/րոպ	180000	«Սինխրոն» ՍՊԸ	145500	29100	174600	141000	28200	169200	«Սինխրոն» ՍՊԸ
18.5 կվտժ1500-3000 պտ/րոպ	210000	«Սինխրոն» ՍՊԸ	169750	33950	203700	164000	32800	196800	«Սինխրոն» ՍՊԸ
22.0 կվտժ1500-3000 պտ/րոպ	218400	«Սինխրոն» ՍՊԸ	176500	35300	211800	170000	34000	204000	«Սինխրոն» ՍՊԸ
30.0 կվտժ1500-3000 պտ/րոպ	270000	«Սինխրոն» ՍՊԸ	218250	43650	261900	211000	42200	253200	«Սինխրոն» ՍՊԸ
37.0 կվտժ1500-3000 պտ/րոպ	324000	«Սինխրոն» ՍՊԸ	261900	52380	314280	255000	51000	306000	«Սինխրոն» ՍՊԸ
45.0 կվտժ 1500-3000 պտ/րոպ	364800	«Սինխրոն» ՍՊԸ	294900	58980	353880	284000	56800	340800	«Սինխրոն» ՍՊԸ
55.0 կվտժ1500-3000 պտ/րոպ	391200	«Սինխրոն» ՍՊԸ	316200	63240	379440	304000	60800	364800	«Սինխրոն» ՍՊԸ
75.0 կվտժ 1500-3000 պտ/րոպ	444000	«Սինխրոն» ՍՊԸ	358900	71780	430680	350000	70000	420000	«Սինխրոն» ՍՊԸ

Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայությունների մասով առաջարկված միավորի գներ

Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ, այդ թվում՝		Ծառայությունների առանձին տեսակների միավորի նախահաշվային գներ՝ ՀՀ դրամ	Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը	Ծառայությունների առանձին տեսակների համար մասնակցի առաջարկած միավորի գներ՝ ՀՀ դրամ			Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը
				Արժեք (առանց ԱԱՀ)	ԱԱՀ	Գին	
Տրանսֆորմատորի բարձր լարման մեկ փաթույթի փոխարինում՝ ըստ հզորությունների	25/10, 25/6	70200	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	40000	8000	48000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	70200	0	70200	
	40/10, 40/6	72800	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	42000	8400	50400	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	72800	0	72800	
	63/10, 63/6	90200	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	44000	8800	52800	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	90200	0	90200	
	100/10, 100/6	96400	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	48000	9600	57600	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	96400	0	96400	
	160/10, 160/6	98500	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	55000	11000	66000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	98500	0	98500	
	180/10, 180/6	111400	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	55000	11000	66000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	111400	0	111400	
	250/10, 250/6	144200	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	60000	12000	72000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	144200	0	144200	
	320/10, 320/6	155800	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	60000	12000	72000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	155800	0	155800	
	400/10, 400/6	188800	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	60000	12000	72000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	168800	0	168800	
	630/10, 630/6	233300	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	65000	13000	78000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	203300	0	203300	
	1000/10, 1000/6	242200	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	70000	14000	84000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	212200	0	212200	
Տրանսֆորմատորի ցածր լարման մեկ փաթույթի փոխարինում՝ ըստ հզորությունների	25/10, 25/6	52800	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	15000	3000	18000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	52800	0	52800	
	40/10, 40/6	56700	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	16000	3200	19200	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	56700	0	56700	
	63/10, 63/6	72700	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	18000	3600	21600	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	72700	0	72700	
	100/10, 100/6	84600	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	20000	4000	24000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	84600	0	84600	
	160/10, 160/6	87700	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	25000	5000	30000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	87700	0	87700	
	180/10, 180/6	94800	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	25000	5000	30000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	94800	0	94800	
	250/10, 250/6	123500	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	30000	6000	36000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	123500	0	123500	
	320/10, 320/6	141800	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	30000	6000	36000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	141800	0	141800	
	400/10, 400/6	148900	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	30000	6000	36000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	148900	0	148900	
	630/10, 630/6	151500	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	35000	7000	42000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	151500	0	151500	
	1000/10, 1000/6	198600	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	40000	8000	48000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	178600	0	178600	

Տրանսֆորմատորի քանդում, հիմնական մեկուսացման պատրաստում, մագնիսական հաղորդիչի ամրացում, չորացում, հավաքում և կարգավորում	25/10, 25/6	47800	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	60000	12000	72000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	47800	0	47800	
	40/10, 40/6	52600	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	60000	12000	72000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	52600	0	52600	
	63/10, 63/6	62700	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	60000	12000	72000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	62700	0	62700	
	100/10, 100/6	69900	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	62000	12400	74400	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	69900	0	69900	
	160/10, 160/6	71100	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	65000	13000	78000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	71100	0	71100	
	180/10, 180/6	72200	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	65000	13000	78000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	72200	0	72200	
	250/10, 250/6	83300	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	65000	13000	78000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	83300	0	83300	
	320/10, 320/6	85500	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	65000	13000	78000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	85500	0	85500	
	400/10, 400/6	91300	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	65000	13000	78000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	91300	0	91300	
	630/10, 630/6	99900	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	65000	13000	78000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	99900	0	99900	
	1000/10, 1000/6	101100	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	70000	14000	84000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	101100	0	101100	
Յուղի արտահոսքի դադարեցում, տրանսֆորմատորի իրանի մաքրում և ներկում	25/10, 25/6	13700	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	25000	5000	30000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	13700	0	13700	
	40/10, 40/6	14100	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	25000	5000	30000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	14100	0	14100	
	63/10, 63/6	20100	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	25000	5000	30000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	20100	0	20100	
	100/10, 100/6	21500	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	25000	5000	30000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	21500	0	21500	
	160/10, 160/6	22200	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	30000	6000	36000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	22200	0	22200	
	180/10, 180/6	23600	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	30000	6000	36000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	23600	0	23600	
	250/10, 250/6	24800	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	30000	6000	36000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	24800	0	24800	
	320/10, 320/6	25500	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	30000	6000	36000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	25500	0	25500	
	400/10, 400/6	33800	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	30000	6000	36000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	33800	0	33800	
	630/10, 630/6	37700	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	30000	6000	36000	«Ալիք-Էներգո» ՍՊԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	37700	0	37700	
	1000/10, 1000/6	39900	«Ալիք-Էներգո» ՍՊԸ	40000	8000	48000	«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ
			«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ	39900	0	39900	

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

ՏԵՂԱԿԱԼ Մ.ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ

Զեկուցագիր

Հարգելի պարոն Ղամբարյան

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ կարիքների համար էլեկտրական շարժիչների և փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի (փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ) համար հայտ են ներկայացրել «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ն և «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ-ն: «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ն նշված չափաբաժնի համար ներկայացրել է 2.286.000 (ներառյալ ԱԱՀ) ՀՀ դրամ, իսկ «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ-ն՝ 3.731.700 (ԱԱՀ վճարող չի հանդիսանում) ՀՀ դրամ գնային առաջարկ՝ համաձայն սույն ընթացակարգի հրավերի Հավելված 4-ի: Սույն ընթացակարգի հրավերի Հավելված 4.2-ի համաձայն՝ մասնակիցները ներկայացրել են նաև 2-րդ չափաբաժնով նախատեսված բոլոր տեսակի ծառայությունների համար միավորի գներ:

Հրավերի Հավելված 4-ի համաձայն՝ սույն չափաբաժնով նախատեսված ծառայությունների ամբողջ քանակը անհրաժեշտ է դիտել որպես մեկ չափաբաժին, իսկ հաղթող մասնակցի ընտրությունը կատարվում է սույն չափաբաժնով նախատեսված բոլոր տեսակի ծառայությունների համար առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, ընդ որում՝ մասնակցի առաջարկած միավորի գները ևս չպետք է գերազանցեն սահմանված նախահաշվային գները:

«Ալիք-Էներգո» ՍՊԸ-ի 2-րդ չափաբաժնի համար նախատեսված բոլոր տեսակի ծառայությունների համար առաջարկած միավորի գները (44 անվանատողերից 16-ում) գերազանցում են ՀՀ պաշտպանության նախարարի կողմից 14.11.2018թ. հաստատված «Ոչ ֆինանսական և ամփոփ ցուցանիշներ»-ի համապատասխան (տվյալ չափաբաժնով նախատեսված ծառայությունների առանձին տեսակների) միավորի նախահաշվային գները:

«Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ-ի նշված չափաբաժնի համար նախատեսված բոլոր տեսակի ծառայությունների համար առաջարկած միավորի գները չեն գերազանցում ՀՀ պաշտպանության նախարարի կողմից 14.11.2018թ. հաստատված «Ոչ ֆինանսական և ամփոփ ցուցանիշներ»-ի համապատասխան (տվյալ չափաբաժնով նախատեսված ծառայությունների առանձին տեսակների) միավորի նախահաշվային գները:

22.02.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի արձանագրության 4.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացրած գնային (ընդհանուր) առաջարկների

հիման վրա 2-րդ չափաբաժնի (փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ) մասով առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ին, մինչդեռ նշված մասնակցի առաջարկած (տվյալ չափաբաժնով նախատեսված ծառայությունների առանձին տեսակների) միավորի գները (44 անվանատողերից 16-ում) ծառայությունների մասով գերազանցում են ՀՀ պաշտպանության նախարարի կողմից 14.11.2018թ. հաստատված «Ոչ ֆինանսական և ամփոփ ցուցանիշներ»-ի համապատասխան (տվյալ չափաբաժնով նախատեսված ծառայությունների առանձին տեսակների) միավորի նախահաշվային գները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 27-րդ կետը՝ զեկուցում եմ Ձեզ իմ կողմից արձանագրված՝ սույն ընթացակարգի հրավերի պահանջների և գնահատող հանձնաժողովի որոշման անհամապատասխանության մասին և խնդրում եմ Ձեր որոշումը:

Կից Ձեզ եմ ներկայացնում սույն ընթացակարգի հայտերի գնահատման նիստի արձանագրության, «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ի և «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ-ի նեկայացրած՝ սույն ընթացակարգի հրավերով սահմանված գնային առաջարկների՝ Հավելված 4-ի և Հավելված 4.2-ի պատճենները:

Առդիր՝ 11 էջ:

ՀՀ ՊՆ աշխատակազմի քարտուղարության
ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Ա. Սահակյան

ԵՐԱՇԽ 23.0
«23» 02 2019 թ.
ՀՀ ՊՆ ՆՏԱՊ ԿՈԴԱ

ՀՀ պաշտպանության նախարարի
տեղակալ Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ

22.02.19 283

Հարգելի պարոն Ղամբարյան

2019թ. փետրվարի 26-ի Ձեր հանձնարարականի համաձայն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 27-րդ կետի 1-ին ենթակետի «բ» ենթակետի համաձայն իրավական եզրակացություն տալու նպատակով, ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության կողմից ուսումնասիրվել է հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից 22.02.2019թ. նիստում ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով կայացված որոշումը, գնումները համակարգողի զեկուցագիրը և կից նյութերը: Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ քննարկվող խնդիրը վերաբերում է այն հանգամանքին, թե արդյոք ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով միավոր գների հանրագումարի արդյունքում գնային նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը կարող է հաղթող ճանաչվել, եթե մասնակցի կողմից առաջարկված չափաբաժնում ներառված ծառայություններից որոշ մասի (44 ծառայություններից՝ 16-ի) միավոր գները գերազանցում են սահմանված նախահաշվային գները՝ հիմք ընդունելով Հավելված 4.2-ի բացատրական մասի 5-րդ կետի դրույթները:

Ուսումնասիրության շրջանակներում ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով երկու մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների համադրությունը հանգեցրել է հետևյալ պատկերին. Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով սահմանված ընդհանուր նախահաշվային գինը կազմել է 3.731.700 դրամ, մասնակից «Նիիէլեկտրամաշ» ԳԱՁ ՓԲԸ չի հանդիսացել ԱԱՀ վճարող և առանց ԱՀՀ հաշվարկի ներկայացված նրա գնային առաջարկը եղել է ընդհանուր նախահաշվային գնի չափով՝ ոչ ավել և ոչ պակաս, ընդ որում, չափաբաժնում ներառված բոլոր ծառայությունների միավոր գները ևս առաջարկվել են նույնը՝ ոչ ավել և ոչ պակաս: Երկրորդ մասնակից «Ալիք-Էներգո» ՍՊԸ հանդիսացել է ԱԱՀ վճարող և նրա գնային առաջարկը կազմել է 2.286.000 դրամ, որից 381.000 դրամը՝ որպես հաշվարկված ԱԱՀ, միաժամանակ չափաբաժնում ներառված 44 ծառայություններից 16-ով առաջարկված գները

ՄՈՒՏՔ 361
«22» 02 2019 թ.
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՈՀԿ

ՄՈՒՏՔ 1683
«22» 02 19 թ.
3

գերազանցել են նախահաշվով սահմանված միավոր գներին՝ ընդհանուր 180.900 դրամ չափով:

Համաձայն գնման ընթացակարգի Հավելված 4.2-ի բացատրական մասի 5-րդ կետի պահանջների՝ «Սույն չափաբաժնով նախատեսված ծառայությունների ամբողջ քանակը անհրաժեշտ է դիել որպես մեկ չափաբաժին: Հաղթող մասնակցի ընտրությունը կատարվում է սույն չափաբաժնով նախատեսված բոլոր տեսակի ծառայությունների համար առաջարկվող միավոր գների հանրագումարի արդյունքում նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, ընդ որում՝ մասնակցի առաջարկած միավորի գները ևս չպետք է գերազանցեն սահմանված նախահաշվային գները:»: Այսինքն՝ մասնակցին նախապատվություն տալու և հաղթող ճանաչելու համար անհրաժեշտ է՝ 1. չափաբաժնով նախատեսված բոլոր տեսակի ծառայությունների միավոր գների հանրագումարի նվազագույն առաջարկ, 2. չափաբաժնով նախատեսված յուրաքանչյուր միավոր ծառայության դիմաց առաջարկված գինը չպետք է գերազանցի այդ ծառայության դիմաց սահմանված նախահաշվային գինը:

Տվյալ պարագայում, վերը նշված դրույթների շրջանակներում ունենք պրակտիկ կիրառման կոլիզիա. մասնակիցներից մեկը ներկայացրել է միավոր գների հանրագումարի նվազագույն առաջարկ, սակայն մի շարք ծառայությունների մասով առաջարկված գները գերազանցում են այդ ծառայությունների նախահաշվային գները, իսկ մյուս մասնակից ներկայացրել է նախահաշվով սահմանված միավոր գների հանրագումարը և յուրաքանչյուր ծառայության մասով նախատեսված գինը չգերազանցող առաջարկ, սակայն գնման գործընթացում այդ առաջարկը չի հանդիսանում նվազագույն:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Քննարկվող հարաբերությունները հանդիսանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ սահմանված կարգի 40-րդ կետով կարգավորվող իրավահարաբերությունների մաս, որոնց շրջանակներում գնման

գործընթացում գործում է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքը: «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնման գործընթացի Հավելված 4.2-ի բացատրական մասի 5-րդ կետի համաձայն որպես 2-րդ չափաբաժնի մասով մասնակցին նախապատվություն տալու հիմք նախատեսվել է միավոր գների հանրագումարի նվազագույն առաջարկի ներկայացման պայմանը, միաժամանակ որպես լրացուցիչ պայման՝ նախատեսվել է, որ յուրաքանչյուր միավորի (ծառայության) դիմաց առաջարկած գները չպետք է գերազանցեն սահմանված նախահաշվային գները: Այսինքն, քննարկվող իրավահարաբերությունների շրջանակներում գործընթացի նպատակը և դրան հասնելու սկզբունքները հանգում են հետևյալին՝ գնման գործընթացում բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նախապատվությունը տրվում է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

Վերոգրյալը նկատի ունենալով հայտնում եմ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից 22.02.2019թ. նիստում ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով կայացված որոշումն իրավաչափ է:

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ,

քիծ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. ՍԻՄՈՆՅԱՆ